գոտին էլ է պատեր ստանում, փայտէ ծանր տախտակներ, որ բերում են ամրացնում պատշգամբի եզերքին:

Այնպէս որ տունը դրսից մի ամուր կողպւած փայտէ սնդուկի տեսք է ստանում: Այդ սնդուկը ես մինչեւ այդ տեսել էի միայն դրսից. իսկ այժմ յանկարծ ինքս ընկել էի մէջը:

Առաւօտը արեւը ծագելուն պէս տախտակները հանում են մեծ դղրդոցով ու աղմուկով:

Ինձ զարթնեցնողը հէնց այս դղրդոցն էր:

Ես վախեցած բացի աչքերս:

Մեր տունն արդէն թափ էր տւել իր պատեանը, արեւի մեղմ ու տաք ճառագայթները թափանցել էին սենեակս, այնպիսի մի գեղեցիկ վարդագոյն փայլ տալով թղթէ պատերին, որ ես իրականութիւնը մոռացած՝ ինքս ինձ մի վայրկեան հէքիաթային մի էակ երեւակայեցի, որ ով գիտէ ի՞նչ կախարդանքով եկել ընկել էր այս բոցավառ լապտերի ծոցը:

Վեր թռչելս ու հագնւելս մի ակընթարթի գործ եղաւ. ետ հրեցի իսկոյն պատը ու սքանչացած՝ կանգ առայ:

Ուղիղ ոտներիս տակ բացւում էր մի խոր անդունդ թարմ կանաչով ծածկած. դէմս կուտակւել էին անտառախիտ սարերը իրար ուսին. իսկ հեռո՛ւն, հեռո՛ւն, հորիզոնի մօտ երեւում էր կապոյտ ծովի մի կտոր:

Աջ կողմս ցրիւ էին եկած գիւղի տները լերան լանջին, որ քանի ետ, այնքան վեր էր բարձրանում: Եւ այդ բարձրութեան վրա օձի պէս ոլորւում էր արահետը, որ տանում էր դէպի Սինբուի եւ Ունդէնի ծծմբային ջրերը:

Ահա դէպի այդ արահետը շտապեցինք մենք գիւղի միջով, մի կերպ արագ նախաճաշը վերջացնելով: